

ՎԵՂ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

Ոսկեմատեանին նոր էջը.

Օգնութեամբն ամենակալին Աստուծոյ, այսօր 26 Մարտ 1956, այցելեցինք Սուրբ Ղազարը:

Տեսանք այստեղ վեհափառ լուսաբնակ Մեծն Մխիթարի տեսիլքին, եւ զգացինք կենդանութիւնը երանելի Ալիշանի «Հաստատեալաց վեհափառ ոգւոյն»:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Աւագ Երկուշաբթի օրը, արտասահմանի փոքրիկ Հայաստանին վրայ կը կոխէր Վեհ. Վազգէն Ա. բերելով հեռուոր հայրենիքի սիրոյ ողջոյնները: Երախտաբեր մաս կը կազմէին էջմիածնի Դիանապետ Պր. Հայկ Առաքելեան, Գաւազանակիր Հոգեհն. Պարգեւ Արեղայ Գէորգեան: Միւրեքն կ'ընկերանային Տիար Երուանդ Հիւսիսեան, Տիար Յակոբ Ալեքսանեան, եւ բանաստեղծ ԲԺ. Արամայիս Սրապեան:

Մուտքին, յարգանքի ողջոյններով կը մօտենային Մխիթարեան Հայրերը. ներկայ էր նաեւ նոյն օրերուն վանքին հիւր՝ Պարսկաստանի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Գեորգ. Մկրտիչ Եպիսկ. Արզարեան: Անցնելով վանքին ծաղկազարդ կամարակապ սրահներէն, բոլորը կ'ուղղուէին դէպի եկեղեցի. ուր Մխիթար Արքայոր շիրմին վրայ, ՄԵՆՔ ԱՆ ՈՒՍՏԱՒՈՐՆԵՐ ԵՆՔ ԸՆԵՐՈՎ՝ պահ մը կ'ամփոփուէր Վեհափառը աղօթական մրմունջներով, մինչ երպնազարդ լուսամուտներէն կը դիտէին Ս. Սահակն ու Ս. Մեսրոպ վեհօրէն, կանգուն վկաները հայ ոգիին. իսկ որմանկարները Ենորհալին եւ Նարեկացիին, Ղեւոնդին ու Վարդանին, Հովհի-

սիմէին ու Սանդուխտին յատուկ առարկայ կ'ըլլային Վեհափառին ուշադրութեան. ու այդ բոլորին ի տես, յուղուած եւ սեւեռուն, ԿՈՒՋԵՒ ՈՐ ԵՐԵՒԱՎԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԽՈՐ ՎԵՐՊՈՎ, ՏՊԱՒՈՐՈՒԵՐ ԱՅՍ ՏԵՍԻԼԸ կը գոչէր Նա:

Մատենադարանի մեծ դահլիճին մէջ Մխարանութեանս Ընդհ. Աթոռակալը Վ. Հ. Գեորգէ Վրդ. Զրաքեան (ի բացակայութեան Գեորգ. Արքայոր) մաղթանքի աղնիւ ուղերձով մը կ'ողջունէր Վեհ. Հիւրը, որուն այցելութիւնը բացառիկ ու աննախընթաց դէպք մըն էր:

Վեհ. Վազգէն Ա. իսկոյն կը փոխադարձէր խոր յուղումով, դրուատելով Մեծն Մխիթարի եւ Ալիշանի ոգին.

Չափազանց յուզուած եմ այս պահուս, ու հազիւ քէ պիտի կարողանամ ամփոփել իմ մտածումներս, չափով մը գոնէ արտայայտելու այն, ինչ որ կը զգամ ու կը խորհիմ:

Ողջոյն Ս. Ղազարին եւ ձեզ բոլորին, սիրոյ ջերմ ողջոյններ Միածնաէջ Սուրբ Տառնէն, Ս. Հովհաննէսէն, Ս. Գայեանէն, Խոր Վիրապէն, Օշականի մեծ սուրբէն, եւ մեր բազմաթիւ սրբաւայրերէն, որոնք որպէս կենդանի վկաները մեր անցեալի փառքերուն, այսօր ալ կանգուն են Արարատեան դաշտի սրտին մէջ:

Ողջոյն ձեզ մեր վեհատեսիլ Արարատէն, ուր ինչպէս կ'ըսէ մեր անմահ բանաստեղծը Աւետիք Իսահակեան, «Դար է եկել, վայրկեանի պէս, ու անցել»:


Ողջոյն ձեզ բոլորին մեր մայր հողէն, մեր հայրենի կապոյտ երկնիքէն եւ Մայր Արաքսի ափերէն: Ողջոյն ձեզ՝ ձեր եղբայրներէն ու քոյրերէն, որոնք կ'ապրին ու կը գործեն մայր Հայրենիքի մէջ:

Անշուշտ ինձ ծանօթ է Ս. Ղազարը եւ Ձեր Միաբանութիւնը. սակայն ուրիշ բան է երբ անձամբ



Չախեն աջ. - Ս. կարգ. - Վեհափառ Վազգէն Ա. վեհափառ վարդապետը - Ս. Ղազարի թանգարանի մուտքին, - Բ. կարգ. - Ս. Մարկոսի շքեղ դռներուն առջեւ - Վեհափառ Հիւրը - Ս. Ղազարի թանգարանի մուտքին, - Գ. կարգ. - Հ. Գ. Վրդ. Զրաքեան, Ընդհ. Աթոռակալ, կը կարդայ «Բարի գալուստ»-ի ուղերձը - Վեհ. Հիւրը կը դիտէ Ս. Ղազարի մայր տաճարի որմերուն վրայ հայ սուրբերու խճանկարները: - Գ. կարգ. - Չախեն աջ. - Ս. Ղազարի մայր տաճարի որմերուն վրայ հայ սուրբերու խճանկարները (1195 թուականէն) - կը թերթատէ Մեծն Աւետարանը (902 թուականէն):

Լուս. Թոքաճեան



Վ. Վ. Վազգեն Ա. կը ստորագրէ Ոսկեմատեանին մէջ

կու գաս, աշխարհիկ կը տեսնես, հոգիովդ կը շօշափես այս կենդանի իրականութիւնը:

Այսօր ես աւելի քան երբեք զգացի մեծութիւնը Մեծն Մխիթարի եւ իր գործին, նաեւ իր աշակերտներուն, որոնք դարերու ընթացքին անմար պահեցին այս վառարանը, ի փառս մեր ժողովուրդին եւ Հայ մշակոյթին:

Կը յիշեմ կարդացած ըլլալ — չեմ գիտեր քեզ ուր, քերես լսած ըլլամ Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեանէն. (շատ լաւ կը ճանչնամ Հ. Պոտուրեան վարդապետը. ամէն անգամ որ Պոլսէն գար, անպատճառ մեր Առաջնորդարանը կ'այցելէր, սուրբ մը կ'առնէր, եւ ինծի մեծ հաճոյք կը պատճառէր, ի հարկ է, երբ կը պատմէր անցեալի իր յուշերէն: Ինք տեսած է լուսաւոր դէմք մեծ Ալիշանին. այն շրջանին, երբ Ս. Էջմիածնայ մէջ ուրիշ մեծ մը բազմած էր, ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ). հանդէսի մը առիթով այստեղ անոնք ոգեկոչուեցին, ու ներկայացուեցին Էքէլայտի Հ. Ալիշան, այնտեղ խորհեցան Հայրիկ կամար մը կը կազմեն, որու երկու սիւններուն վրայ կը հանգչի հայու ճշմարիտ ոգին:

Այսօր մեր մէջ չեն ոչ մէկը ոչ միւսը. բայց անոնք կենդանի են մեր հոգիներուն մէջ, այնպէս ինչպէս խորհեցան Ս. Էջմիածնայ մէջ, Հ. Ալիշան ալ այստեղ:

Ու այդ կամարը կը մնայ կանգուն, կենդանի եւ յաւիտենական:

Մենք որ եկած ենք ժամանակաւորապէս գրաւելու անոնց Աթոռները, պարտականութիւն կը նկատենք ամբողջով այդ կամարը ի փառս քրիստոնէութեան եւ մեր Հայ ժողովուրդին:

Իրապէս զգածուած եմ Ձեր այս ամենաջերմ ընդունելութեան համար: Խոր գոհունակութիւն իմ կողմէ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմէ, բարեմաղթութիւններով հանդերձ:

Տէրը այս Սուրբ կղզին ամուր պահէ, ոյժ եւ կարողութիւն պարգեւէ անոնց՝ որ մեղուի մեմն կ'աշխատին ու կը շարունակեն այն մեծ գործը զոր սկսաւ երանելի Սեբաստացին:

Վստահ եմ որ փոքրիկներու այս պատրաստուող սերունդը, նորանոր էջեր պիտի բանայ Ս. Ղազարի փառքի պատմութեան մէջ:

Կը ցաւիմ որ բախտը չունեցայ անձամբ ճանչնալու Ձեր Գերբ. Աբրահայրը. սակայն կը փափայիմ որ երբ վերադառնայ իր ուղևորութենէն, Դուք քարգմանն ըլլաք իմ զգացումներուս. եւ յայտնեցէք մաղթանքներս որ առիթ մը ստեղծուի զիրար ողջունելու՝ կա՛մ այստեղ, կա՛մ Ս. Էջմիածնին:

Ի յիշատակ իր այս այցելութեան, Վեհափառ Կաթողիկոսը վանքին կը նուիրէր մեծ աւելում մը, իր Կաթողիկոսական ընտրութեան բաղձաթիւ նկարներով. երկրորդ նուէրն էր Հայաստանի մեծագոյն նկարիչ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆԻ մէջ թանկագին իւղանկարը, յաւիտենական Արարատը՝ հուսկ Հայաստանի արեւահամ դինիէն շիշ մը (Այդեշատ):

Փոխադարձ կը ստանար Մխիթար Աբրահայր մահուան Բ. դարադարձի ոսկեղէն մետաղը, Աւետարանի աշխարհաբաժնի թարգմանութեան փառադարձ օրինակ մը, եւ 1949ի ԳԵՂՈՒՆԻՆ:

Կ'առաջնորդուէին ճաշի:

Հուսկ կը սկսէր պտոյտը Վանքին մէջ՝ Թանգարան, ձեռագրատուն, ուր յատկա-



Ձախէն ալ. - Ա. Կարգ. - Վ. Վ. Վազգեն Ա. Մուրատ - Ռաֆայէլեան Վրդ. Տեառնարանի մէջ - Վարժարանին Տեսուչ՝ Հ. Եղիա Վրդ. Փէշիկեան կ'ուղերձէ՝ - Բ. Կարգ. - Վեհափառ Մուրատ - Ռաֆայէլեանի աշակերտներէն հետ - Վեհափառի փակման խօսքը: Լուս. Թոքաճեան

պէս կը հակէր Պիծակի, Կոստանդին Սկեւոսցիի չքնաղ մանրանկարներուն վրէպայ. կը թերթատէր 902 թուականէն Մըլէի Աւետարանը եւ այլ գործեր:

Պատկերասրահին մէջ հիացումով կը դետէր Խրիմեան Հայրիկէն զրկուած՝ Սեւանի վանքի Աստուածամօր պատկերին օրինակը. այն պատկերին, որուն առջեւ փայլած էր Մխիթարի տեսիլքը: Քիչ անդին կը նշմարէր Մարտիրոս Սարեանի Աբրահայրը, արդէն իսկ դատաւորուած Այդուպակիի ու Բաշինջաղեանի Արարատ-ներու կողքին: Մեծ յուզումով կը մտնէր Ալիշանի սենեակը, որու շրջինն ալ ողջունած էր քիչ առաջ: Եւ այսպէս յաջորդաբար վանքին ձեմարան-ընթերցարանը, Կաթողիկոսանոց թանգարանը, Մխիթար Աբրահայր դատարանը, եւ հուսկ ապարանը, ուր մանրամասնօրէն կը հետաքրքրուէր արդիական մէջ մի գործիքներով եւ վանքին նոր հրատարակութիւններով:

Անձրեւոտ քանի մը օրերէ վերջ անոյճ արեւ մը ելած էր յանկարծ, որ երեկոյեան հրաժեշտի պահուն՝ կը հայեւանար Վեհափառ Վանքի վէտիկտուն ծփանքներուն մէջ, ստեղծելով դիւթական պատկեր մը, ոսկեղօծելու համար՝ կարծէք՝ անցած իրականութեան խորհուրդը:



Յաջորդ օրը, Մարտ 27ին, յետ այցելելու Վեհափառ Ս. Մարկոս եկեղեցին եւ Դքսական պալատի հրաշալիքները, Վեհափառ հիւրը իր հետեւորդներով կու գար Մուրատ-Ռաֆայէլեան Վարժարանը, որ Թիէփոլեան շրջի դահլիճին մէջ տեղի ուր Թիէփոլեան հիւրասիրութիւն մը, հայրենասիրական ու կրօնաշունչ երգերով խառն:

Վարժարանին Տեսուչ Հ. Եղիա Վրդ. Փէշիկեան բարի գալուստի կու խօսքերով

կ'ողջունէր Վահագնը, որ իր կարգին հետեւեալ իմաստալից ճառով կը փակէր իր այցելութիւնը:

Գերարգելի Տեսուչ եւ Սիրելի Հ. եղիս, երկու օրէ ի վեր ես հոգեկան խոր մխիթարութեան եւ ուրախութեան պատեր կ'ապրիմ այստեղ. երէկ Ս. Ղազարի մէջ, Սխիբարեան Ուխտի գիւնուորեալ Հայերէն ծոցին մէջ, եւ այսօր այստեղ այս լոյսի եւ գիտութեան եւ հայկական ուրիշ օճախին մէջ, ուր Դուք, բոլոր մեր Հայ հոգեւորականներ, ձեր հաւատքի հուրով, ձեր ազգային ոգւոյ զօրութեամբ զինուած՝ մեծ գործ մը կը կատարէք, աշխատանք մը՝ գոր ընծայ կը բերէք Հայ ժողովուրդին, ընծայ մը գոր բոլորս կը գրնահատենք. եւ ես կը խորհիմ քէ ձեր այս ազգանուէր գործը վեր է ամէն գնահատանքէ եւ արժանի է ամէն փառաբանութեան: Իմ ճայմը ուր ալ հասնի, ես այս խօսքը պիտի ըսեմ ու կրկնեմ:

Հիմա քոյլ տուէք որ երկու խօսք ուղղեմ այս աշակերտներուն, ձեր ուսանողներուն, որ ձեզի սիրելի են անշուշտ եւ հարազատ, բայց նոյնքան սիրելի են եւ հարազատ նաեւ մեզ:

Սիրելի աշակերտներ: Ես իմ անունն չեմ տար. որովհետեւ վստահ եմ քէ դուք զիս կը ճանչնաք, գիտէք քէ ով եմ, եւ մանաւանդ գիտէք քէ ուրկէ կու գամ. եւ այս է կարեւորը:

Կու գամ Ս. Էջմիածնէն. այնտեղէն ուր բազում դարեր առաջ Աստուած մեր ժողովուրդին խօսեցաւ. այնտեղէն ուր Ս. Գրիգոր, Լուսաւորիչը մեր աշխարհի, իր ուխտը կնքեց Աստուծոյ հետ, ուխտ մը որուն հաւատարիմ մնաց մեր ժողովուրդը դարերէ ի վեր եւ մինչեւ այսօր, եւ յաիտեան պիտի մնայ: Կու գամ այն երկրէն, այն աշխարհէն, գոր դուք երգեցիք քիչ առաջ. «Իմ հեռաւոր Հայրենիք, իմ փառաւոր Հայրենիք... իմ անուշիկ Հայաստան»: Ձեր խօսքերն են որ իմ սրտիս մէջ դրոշմուեցան: Ահա այս անոյշ Հայաստանէն կու գանք մենք, մեր մայր Հայրենիքէն, եւ կը բերենք ձեզ ողջոյն եւ օրհնութիւն Ս. Էջմիածնէն, եւ մեր մայր երկրէն: Ձեզի կ'ուզեմ բերել մանաւանդ ողջոյն Օշականէն, այնտեղէն ուր կը հանգչի մեծ Սուրբը, Մեսրոպ Մաշտոց, որուն անունը վստահ եմ քէ ձեր հոգիներուն մէջ արձանագրուած է եւ պիտի մնայ յա-

ւիտեան: Այն Սուրբը որ մեզի սորվեցուց մեր Մեծաբան լեզուն, այն լեզուն որ մեր ժողովուրդի հետ միասին դարեր ապրեցաւ, բազում տառապանքներէ եւ դժուարութիւններէ անցաւ եւ այսօր կենդանի է մեր միջոցաւ, մեր, այսօրուան ապրողներու միջոցաւ. եւ մենք կը սորվինք, կը զարգանք մեր կը ծաղկեցնենք զայն: Ինչպէս մեր նոր գրագէտներէն Նայիրի Զարեան գովեց հիւսելով Հայոց լեզուին, կ'ըսէ. «Հերոսական լեզուների հերոս եղբայր, Հայոց լեզու»: Իսկ Սիլվա Կապուտիկեան, մեր տաղանդաւոր բանաստեղծուհիներէն մէկը, իր խօսքը ձեզի՝ մանաւանդ ուղղելով կ'ըսէ. «Թող մանկանայ ձեր շրթներին մեր ալեհեր Հայոց լեզուն»:

Եւ ահա ես այսօր անգամ մը եւս տեսայ որ դուք, շնորհիւ Սխիբարեան Հայրերու սուրբ աշխատանքին, դուք կենդանացուցած էք ձեր շրթներուն այդ լեզուն, եւ կը խօսիք այնքան եւ նոյնքան փառք, ինչքան մեր Հայաստանի ձեր տարեկիցները, ձեր ընկերները եւ ընկերուհիները դպրոցական: Դուք այստեղ քիչ էք համբաւով, բայց ես կը փափաքեմ որ դուք ձեր հոգիի աշխարհը տեսնէիք նաեւ հազար հազարաւոր այն աշակերտներն ու աշակերտուհիները որոնք երեւանի եւ Հայաստանի միւս քաղաքներու դպրոցներուն մէջ, հազար հազարներով է որ կը սորվին ձեզ նման եւ ձեզի պէս կը խօսին մեր Մեծաբան լեզուն: Դուք ալ լաւ սորվեցէք այդ լեզուն, որպէսզի օր մը եքէ դուք անոնց հետ հանդիպիք, հայրենի արեւիս տակ, իրար լաւ հասկընաք հայերէն լեզուով:

Սիրելի աշակերտներ. վերջացնելէ առաջ իմ խօսքերը, կ'ուզեմ ձեզի պատկեր մը ներկայացնել, եւ կը փափաքեմ որ այդ պատկերը պահէք ձեր հոգիներուն մէջ:

Հինգ տարի առաջ, երբ ես առիթ ունեցայ Էջմիածին այցելելու, ամառուան շրջանին էր, Յուլիսին, երբ Ս. Սահակի եւ Մեսրոպի տոնն էր. հիմնադրութի օր մը Օշական գաղիք. մեր հանգուցեալ Հայրապետը, երջանկայիշատակ Գէորգ Զ. կաթողիկոս Ամենայն Հայոց, իմ վրայ դրաւ փառք պարտականութիւն մը այդ օրը սուրբ պատարագ մատուցանելու Օշականի եկեղեցիին մէջ, եւ Միաբանութեան անդամներուն հետ մէկտեղ գաղիք դէպի Օշական երկու մեծ մեքենաներով: Առաջին անգամն էր որ այս համարդուքիւնը

կ'ընէի եւ առաջին անգամն էր որ պիտի տեսնէի Օշականը եւ Ս. Մեսրոպի գերեզմանը: Երբ տակուն գիւղէն հեռու էի, արդէն սկսայ տեսնել հազարաւոր մարդիկ որոնք կը շարժէին հեռուէն. եւ հետզհետէ մօտեցաւ անոնց աղմուկն ալ ըսկըսայ լսել: Հաւատալս չէր գար, վասնզի աշխատանքի օր էր. այնուամենայնիւ Օշականի բոլոր գիւղացիները եւ շուրջի գիւղերէն մինչեւ հեռու գտնուող Ոսկեվազ մեծ գիւղէն, Աշտարակի շրջանէն եւ ուրիշ շրջաններէն, հարիւրաւոր, հազարաւոր գիւղացիներ, ծերեր եւ երիտասարդներ, աղջիկներ եւ տղաներ, դպրոցականներ բազմաթիւ, բոլորը եկեր էին ուխտի իրենց ամէնէն տօնական հագուստները հագած:

Մենք դժուարութեամբ կրցանք ներսի այդ Բագմավէպը եւ մօտեցաւ եկեղեցիին. անշուշտ եկեղեցիին մէջ ասեղ ձգելու տեղ չկար. մենք մեր սուրբ պատարագը մատուցեցինք. յետոյ ես ալ գացի համարելու շիրիմը Ս. Մեսրոպի. եւ այդ առիթով տեսայ հրաշալի պատկեր մը. տեսայ ինչպէս բոլոր ուխտաւորները, բայց մանաւանդ պատանիները եւ երիտասարդները դպրոցական գոյններ հագած, ինչպէս դուք, աղջիկներ եւ տղաներ, շարան շարան կ'իջնէին դէպի վար սանդուղներէն, սուրբ խորանին ետեւի կողմէն, որովհետեւ ճիշտ խորանին ներքեւ կը գտնուէր Օշականը Ս. Մեսրոպին. կու գային այնտեղ, կը մանք աղօթք մը կ'արտասանէին եւ յետոյ կը մեկնէին: Եւ այդպէս այդ շարանը չէր հատներ ժամեր շարունակ:

Ես կեցայ այնտեղ մինչեւ ժամը հինգ-վեց երկուրեւ. որովհետեւ ըստ Հայաստանեայց սովորութեան, երբ ուխտագնացութիւն տեղի կ'ունենայ եւ երբ սրբազան արարողութիւնները կը վերջանան, ժողովուրդը չի ցրուի, այլ կը մնայ այնտեղ, եկեղեցւոյ շրջափակին մէջ, ժամեր շարունակ, եւ — ինչպէս հոն կ'ըսուի — տառապանքով քիչ կ'ընէ: Ուրախութիւնը կը շարունակուի մինչեւ գիշեր, պարերով, երգերով ժողովրդական:

Ահա այսպիսի ժողովրդական հանդէսի մը եւ ներկայ եղայ այդ առիթով եւ զգացի քէ ինչքան կենդանի էր սէրը, յարգանքը այդ սուրբին հանդէպ: Ես պիտի ցանկայի որ դուք բոլորդ, ինչպէս Հայաստանի ձեր ընկեր ընկերուհիները, Ս. Մեսրոպի դամբանին վրայ օր մը ծունկի գայիք եւ համարելիք:

Սիրելի աշակերտներ. ես գիտեմ որ դուք աշխարհի ամէն կողմերէն եկած էք այստեղ սորվելու. եւ գիտեմ որ օր մը պիտի վերադառնաք ձեր տունները. յետոյ քերեւս համալսարան մը ունէք, կամ արուեստի գծով զարգացնէք ձեր ուսումը:

Ես կը մաղթեմ որ դուք առաւելաւ չափով ամբարձր գիտութիւն. սորվիք բազմաթիւ օտար լեզուներ, իտալերէն, ֆրանսերէն, անգլիերէն, եւ ուրիշ լեզուներ: Իւրացնէք համաշխարհային մշակութային արժէքները — ինչքան կարելի է շատ — որպէսզի դառնաք լուսամիտ հայ պատաշտ — որպէսզի դառնաք լուսամիտ հայ պատաշտներ, եւ ամօքով չմնաք երբեք ուրիշ ժողովուրդներու զարգացած գաւակներուն առջեւ: Բայց այս բոլորով հանդերձ, դուք պահէք պահպանէք ձեր հայկական լեզուն, ձեր հայկական ուսման ձեր հայկական լեզուն, ձեր հայրենասիրութիւնը, եւ ոչ միայն դուք պահէք եւ պահպանէք, այլ այս լոյսի եւ դուք պահէք եւ պահպանէք բոլոր մեր կրակ տանիք ազգային ոգիի վառարանէն բոլոր մեր կրակ տանիք ձեր հայկական լեզուն, ձեր հայկական ուսման ձեր ընտանեկան յարկին տակ, ձեր ընկերներուն, ձեր բարեկամներուն, եւ միշտ ջակերներուն, ձեր բարեկամներուն, եւ միշտ ջակերներուն, ձեր բարեկամներուն, եւ միշտ ջակերներուն, եւ միշտ ջակերներուն, եւ միշտ ջակերներուն: Իմ աղօթքը կը բարձրացնեմ առ Աստուած,

մաղթելով ձեզի հոգւոյ եւ մարմնոյ առողջութիւն. Տէրը շատցնէ, անցնէ իր շնորհները, ձեր ֆանապարիւր լուսաւորէ, հեռու պահէ ամէն տեսակ փորձութիւններէ, եւ ձեր բոլոր առաքինաւոր սակ փորձութիւններէ պարգեւէ. եւ դուք դառնաք յաջողութիւն պարգեւէ. եւ դուք դառնաք լուսամիտ, շինարար եւ բարի մշակներ, ձեր կեանքի ընթացքին, մինչեւ ի խոր ծերութիւն, ի փառս Հայ ժողովրդեան: Օրհնեալ ըլլաք այժմ եւ յաիտեան. ամէն: